audite
MUSIKPRODUKTION

PLAYS ON ALL CD- AND SACD- PLAYERS!

Մամլո տեղեկատվություն

Նվիրում Կոմիտասին

Կոմիտաս (1869-1935)
Հայերեն եվ գերմաներեն երգեր

Հասմիկ Պապյան – սոպրանո
Վարդան Մամիկոնյան – տաշնամուր

Հրատարակչություն - Աուդիտե (Գերմանիա)
Ձայնագրություն - Բավարական Ռադիո

Հայ վարդապետ Սողոմոն Սողոմոնյանը հանրածանոթ Կոմիտաս հոգեվոր անվանումով 1900-ական թվականներինև հայկական բարձրավանդակներում՝ (Վանա լճի, Սեվ ծովի, հարավային Կովկասի միջեվ) իր ճամփորդությունների շնորհիվ բազմաթիվ ժողովրդական երգեր է հավաքել: Հարյուրավոր տարիների բանավոր ավանդություն ունեցող այդ երգերում արտահայտված է դարավոր ժողովրդի անկրկնելի մշակույթը իր ողջ հնությամբ. մի մշակույթ, որը 1915-1917թ. Օսմանյան կայսրության կողմից կատարված եղեռնի պատճառով գրեթե մոռացության էր ենթարկվել: Կոմիտասը անձամբ 1915թ. ապրիլյան եղեռնի մասսայական ձերբակալությունների եվ տեղահանության զոհն է դարձել. չնայած չի նահատակվել բայց մնացած ողջ կյանքը անցկացրել է հոգեբուժարաններում որպես հոգեպես խանգարված մարդ: Կոմպոզիտոր եվ բանահավաք Կոմիտասը, որը ուսանել է նաեվ Բեռլինում, զբաղվել է հայ առաքելական եկեղեցական պատարագի ավանդույթներով: Այսօր նա համարվում է հայ ժամանակակից դասական երաժշտության հիմնադիրը: Իր հավաքագրած երգերի մի մասը փոխադրել է ինչպես kunstlied-ի, այնպես էլ խմբերգի ձեվով: Այս SACD (սուպեր աուդիո կոմպակտ դիսկ) նպատակ ունի ներկայացնելու մշակութային բարձր արժեք ունեցող քաջածանոթ երգերը լայն հասարակությանը, քանզի այս երաժշտությունը Հայաստանում բնակվող եվ աշխարհով մեկ տարագրված սփյուռքահայերից բացի, օտարներին գրեթե անծանոթ է: Անմիջականորեն հուզիչ, արեվելքի եվ արեվմուտքի հատման կետում քրիստոնեա-հայկական անհատականությունը հատկանշող այս երգերը պատմում են ինչպես հաղթական լեռների, կորուսյալ հայրենիքի հանդեպ կարոտի, այնպես էլ հավիտենապես շարունակվող խոր տառապանքի եվ սիրո մասին:

26 հայերեն երգերի կողքին այս սկավառակը ընդգրկում է նաեվ 9 երգեր գերմանացի բանաստեղծների (Գյոթե, Ուլանդ, Լենաու եվ այլոք) տեքստերով որոնք Կոմիտասը իր Բեռլինում ուսանելու տարիներին է ստեղծել: Այս առաջին անգամ հնչող երգերում լսելի է թե հայ կոմպոզիտորը որքան լավատեղյակ է արեվմտյան երաժշտական ավանդույթներին, Շուբերտից մինչեվ Հուգո Վոլֆ եվ Ռիխարդ Շտրաուս: Գրքույկում զետեղված են երգերի հայերեն, գերմաներեն, անգլերեն եվ ֆրանսերեն տեքստերը, ինչպես նաեվ Կոմիտասի կյանքը եվ գործունեությունը ներկայացնող ամբողջական նյութ:

Հասմիկ Պապյանը, որը երկար տարիներ է, ինչ աշխարհի մեծագույն բեմերի մշտական հյուրն է, շարունակաբար հանդես է գալիս Տոսկայի, Աիդայի, Նորմայի եվ այլ դերերգերով Մետրոպոլիտենի, Լա Սկալայի, Փարիզի Բաստիլ, Վիեննայի, Բեռլինի, Մյունխենի, Շտուտգարտի, Դրեզդենի պետական օպերաների բեմերում: Այդ ամենի հետ մեկտեղ նա պահպանել է իր կենսական կապը հայրենիքի հետ: Կոմիտասի երգերը բազմիցս երգել է Լոնդոնի Վիգմոր սրահում, Բրյուսելում, Մյունխենում, Վաշինգտոնում եվ այլուր:
Երիտասարտ հայ դաշնակահար **Վարդան Մամիկոնյանը** պարբերաբար համերգներով հանդես է գալիս միջազգային ամենանշանավոր բեմահարթակներում, ինչպիսիք են Կառնեգի, Մյունխենի Հերկուլես, Ցյուրիխի Ton, Փարիզի Գավո եվ այլ սրահներում: Դասական-ռոմանտիկական երկացանկի կողքին (Լիստ, Շոպեն, Ռախմանինով եվ այլոք) նա նույնպես հայտնի է դարձել հայ կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանի գործերով:

Ներկայացված խտասալիկի լույս ընծայումը թե բովանդակությամբ եվ թե կատարողական տեսանկյունից բացառիկ երեվույթ է: Այս ամենը հրամցնում է բազմաբնույթ առանձնահատկություններ, ինչը արտացոլված է SACD-ի արտաքին սեվ կոշտ կազմի եվ ոսկետառ դաջվածքի միջոցով, որոնք վստահաբար բարձր որակի եվ նրբագեղության նշան են:

Պատվեր: audite 92.570
EAN: 4022143925701
ինտերնետ: http://www.audite.de/sc.php?cd=92570

4 022143 925701

SUPER AUDIO CD

»audite« Ludger Böckenhoff • Tel.: +49 (0)5231-870320 • Fax: +49 (0)5231-870321 • info@audite.de • www.audite.de